Ս . . . . . . .
ՑԱՌԱՋՆ⸢ՈՐԴ-
ՈՒԹԲ⸣. ՍԲ. ՈՒԽՏ⸢ԻՍ⸣
. . . . . . .
. . . . . . .
. . . . . . .
. . . . . . .
. . . . . . .
. . . . . . .
. . . . ԿԱՆ-

⸢Գ⸣ՆԵՑ⸢Ի⸣ ՁՍԲ. ԳՐԻ-
ԳՈՐՍ Ի ԲԱՐԷԽ-
⸢Ա⸣ԻՍՈՒԹԻ. ՀԱԻՐ
⸢Ի⸣Մ⸢Ո⸣Ց ԳՐԻԳՈՐ
ԵՒ ՄԱԻՐ ԻՄՈՑ
. . . . . . . .
⸢ՈՐՔ⸣ ՁԵՐԿՐՊԱԳ-
ԷՔ⸣ ՁՄԵԶ . . .
. . ՑԱՂԱԻԹ⸢Ս⸣
⸢Ց⸣Ի⸣ՇԵՍՋԻՔ։

Ծանոթ. *Արձանագրության բովանդակությունը կապված է 1222 թ. Գանձակում տեղի ունեցած վրաց և ղփչաղների պատերազմի հետ։ Գրիգորը, որի հիշատակին կանգնեցվել է խաչքարը, պետք է լինի Հաղբակի որդին, որը նահատակվեց։ Վերջինիս որդու անունը կարելի է վերականգնել Վասակ, իսկ կնոջը՝ Զազա։*

## 87. ԱԲԼԱՀ ԳՑՈՒՂ

*Այս գյուղն այժմ տեղափոխված է և գտնվում է իր հին վայրից մոտ երկու կիլոմետր հեռու, դեպի արևելք։ Նախկին գյուղատեղում մնում է կանգուն կոփածո քարերով թաղածածկ եկեղեցին՝ ս. Մինաս անունով (հավանաբար XVI—XVII դարերի)։ Եկեղեցին խնամվել է մինչև XIX դարի վերջերը։ Այդ են ապացուցում երկու արձանագրություններ, որոնցից մեկը հայտնում է, որ հարավային մուտքը շինվել է 1892 թ. Արլահեցի Միքայել Սարգսյան-Ղազանչյանի ծախսով, իսկ մյուսը, որ նույն մուտքի առաջ շինված զանգակատունը կառուցվել է 1896 թ. նույն Միքայելի և իր հայր Սարգսի կողմից։*

*Ավելի հին մի արձանագրություն գտնվում է հարավային մուտքի մոտ, պատի մեջ ագուցված կիսակամար մի քարի վրա, որն ունի 1732 թ.։ Սա եկեղեցու կառուցմանը չի վերաբերում, նորոգումների հիշատակություն պետք է համարել, որոնք արվել են Թահմազ շահի ավերածություններից հետո։ Այդ քարը հին բարավոր է, հավանաբար նույն հարավային մուտքի։ Ղազանչյաններն այդ մուտքը լայնացնելու և ձևավորելու նպատակով քարը հանել և տեղադրել են պատի մեջ։*

*Եկեղեցուց արևմուտք, թեք լանջի վրա տարածված է հին գերեզմանատունը, ուր կան մի քանի արձանագրված խաչքարեր։*

***828. Ս. ՄԻՆԱՍԻ** հարավային պատի մեջ ագուցված հին բարավորի վրա.*



⌈ԹՎ⌊ԻՆ⌋ :ՌՃՁԱ: (1732) ՑԻՇԱՏԱԿ Է| ՊԵՏ⌈ՐՈՍԻՆ, Հ|ԱԿՈԲ⌊Ի⌋Ն, ՄԻՐԶԻՆ| ⌊Ե⌋Ի ՏՐԱԻԲ ՏՐ. ՊՕՂ|ՕՍԻՆ. ՈՐ ԷԻՆՔ| ՈՐԴԻՔ ԱԻԵՏԻՍԻ. |Ի ԱԶԳԷՆ ՀԱՍ|ԱՆԱՆՑ. ԱՐ ԼՐ ԺԱՄ⌊Ա⌋ՆԱԿՆ ՎԱ⌊ԻՆ ԱՀՄԱՏԻՆ, ՈՐ ԳՈՋԻ ԹԱՀՄԱԶ. ՈՐ ԹԱՔ|⌈ԱԻՈՐ-ԵՑԱԻ Ի⌉ ԵՐԳԻՐՆ ԲԱՐՍԻՑ. ԲԱԶՈՒՄ ԳԱԻԱՌՍ ԱԻԵՐԵԱՑ:

Ծանոթ. *Առաջին մեկ և կես և վերջին տողի սկզբի մասերը ջնջված են, լրացնում ենք հին հրատարակությունից։*

*Փակագիրը ենթադրաբար կարելի է վերծանել* Պրիստոսի ծառա տեր Պօղօս.

*Կենտրոնական վարդակից վեր երեք տառերը մնում են անհասկանալի. եթե համարվի :Ն: (400) թվ. Հայոց, ապա գրչությունը չի համապատասխանի տվյալ ժամանակին։*

*Հրատ. Բարխուդարեանց, 267։ Լալաեան, V, 317։*

Լուսանկ. 122.

*829. ԽԱՉՔԱՐ, փոքր, սպիտակավուն քարից, ագուցված է ս. Մինասի արևելյան պատի վերին, ավելացված մասում, կողքին 9 տող.*

ՍԲ ԽՆ
ԲԱԽ
ՀՐԴ
ՄԵԻ
ԵՍԱ
ՅԱՍ
ԳԼ
ՀՈԳ
ԹՃԼ

ՍԲ. Խ⌊Ա⌋Զ⌈Ս⌉| ԲԱ⌊ՐԷ⌋Խ|⌊ԱԻՍ⌋| Հ⌊ԱՑ⌋Ր⌊Ա⌋Պ⌊Ե|ՏԻՆ⌋ ԵԻ ԵՍԱ⌊ԻՆ⌋ . . . | . . |ՀՈԳ|⌊ՈՑՆ⌋. ԹՎ⌊ԻՆ⌋ :ՌՃԼ: (1681):

*830. ԽԱՉՔԱՐ, փոքր, կանգնած է գերեզմանատան մեջ. քիվին և թևերի շուրջը.*




ԽԱ⌊Զ⌋Ս Փ⌊Ր⌋ԿՈԻԹԻ. ԹԻԼՆԱԽ⌊Ա⌋ԹՍԻՆԱ|. ԹՎ⌊ԻՆ⌋ :ՌԽԵ: (1596):

*831. ԽԱՉՔԱՐ, մեծ, կանգնած է գերեզմանատան մեջ. թևերի արանքում 6 տող.*

ԹԱ ԼԱՍ ՈՒՄ
ԽՆ Ռ
Մ
ՈՒՆ
ՀՈԳ
ՈՒՆ

ԹԱԼԱՍՈՒՄ| Խ⌊Ա⌋ՆՈՒ|Մ|ՈՒՆ| ՀՈԳ|ՈՒՆ.

**832. ԽԱՉՔԱՐ**, *մեծ, պատվանդանով միասին ընկած է գերեզմանատան մեջ. քիվին, խաչի թևերի շուրջը և հարավային կողին 9 տող.*

ԵՍԱՐԳԻՍԷՐԷՑ · · · · · · · · · ՄԻՆ
ԲԱԷԻՍԷԳԻԼԻՆ ԳՈՂԼԻՆ ՀՈԳՈՒՆ

ԽԱ | ՆՈՒՄ
ԻՆ

ԴԱԼ
ՊԷԿԻՆ
ՔՍԴԱՔ
ԻՆ
ՌԱՒ

Ե[Ս] ՍԱՐԳԻՍ ԷՐԷՑ [ԿԱՆԳՆԵՑԻ]
ՍԲ. Խ[Ա]Չ[Ս] Բ[Ա]Ր[Է]Խ[Ա]Ւ[Ս] Է
ԳԻ[Լ]ԻՆԳՈՑԼԻՆ ՀՈԳՈՒՆ: ԽԱ-
ՆՈՒՄ[Ի]Ն. ԴԱ[Լ] ՊԷԿԻՆ[,] ՔԱ-
Դ[Ա]Ք[Ի]Ն[ ՌԱԻ · · · ·

Ծանոթ. *Վերջին տառերը հնարավոր է թվական համարել՝ :ՌԱ: (1552)։*

## 88. ԳԵՏԱՇԵՆ—ՁԱՅՔԵՆԴ ԳՑՈՒՂ.

*Նրբեմնի մելիքանիստ այս գյուղը գտնվում է Կարակ չոլ գետի ափին, ձորի մեջ։ Այս մեծ գյուղում կան հետևյալ արձանագիր հուշարձանները.*

Ա. Գերեզմանատուն. *գտնվում է գյուղից արևմուտք, հարթավայրի վրա. շատ ընդարձակ է. այստեղ կան բազմաթիվ գեղաքանդակ խաչքարեր և կենցաղային քանդակներ ունեցող տապանաքարեր։ Դրանցից ամենահինը 1550 թվականից է։*

Բ. Անապատ. *գտնվում է գյուղի վերին եզրին, գետի ձախ ափին. թաղածածկ շենք է։*

Գ. Նաճատակի մատուռ կամ ավագ սբ. Նշան. *գտնվում է գյուղի ստորին եզրին. փոքրիկ մատուռ է, որի բեմի տակ դամբարան կա, ուր «Նահատակի» գերեզմանն է։*

*Այս մատուռի մեջ անցյալում եղել են չորս ձեռագիր ավետարան և մի քանի մասունքներ, որոնցից Եղիշե առաքյալի արծաթյա աջի վրա՝*

Այս է աջ սրբոյն Եղիշէի առաքելոյն. աշխատողքս, որ այս է Իգնատիոս եպիսկոպոս, որ եբեր սուրբ նշխարս ի Կաֆայու յիշատակ սորա. տէր Ոսկան եպիսկոպոս:

Կամաւն Աստուծոյ Կարապետ եպիսկոպոս եւոյ նորոգեցի. Աստուած ողորմի ասացէք:

Կամաւն Աստուծոյ Մուրատս, որդի Նիազի շինեցի սուրբ աջս, Աստուած ողորմի ասացէք. առաջնորդութեան Ոսկան եպիսկոպոսին. թվն. :ՌԿԸ: էր (1619)[1]:

Դ. Եղնասար վանք. *գտնվում է գյուղից մոտ երկու կիլոմետր հեռու. կոչվել է Եղիշե առաքյալի անունով. շինված է սրբատաշ քարերով։ Այժմ մնում են պատերի կեսերը և մի քանի այլ շենքերի ավերակներ։*

*Այստեղից վերև, անտառապատ ձորերի մեջ կան երկու-երեք այլ կիսավեր եկեղեցիներ։*

*Գյուղամիջում կանգուն է սբ. Աստվածածին եկեղեցին և Մելիք-Մնացականյանների ապարանքը։*

*Գյուղից և շրջակայքից հավաքել ենք 25 արձանագրություն, որոնցից 16-ը հրատարակվում են առաջին անգամ։*

### ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ

**833. ԽԱՉՔԱՐԵՐ**, *երկու հատ, գեղաքանդակ և մեծ, կանգնած են իրար կից մի պատվանդանի վրա. դիմացները անարձանագիր մեծ տապանաքարեր։*

Ա. Հարավայինի քիվին և ստորին մասում 7 տող.

---

[1] *Ջալալյանց, I, 172, Բարխուդարեանց, 264։ Լալայան, V, 319։*